ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ՕՐԳՈՎԻ ՀԱՄԱՅՆՔ

РЕСПУБЛИКА АРМЕНИА
РЕГИОН АРАГАЦОТН
СЕЛЬСКАЯ ОБШИНА
ОРГОВ

հեռ. 077-21-79-19
N 46_____
24__12__ 2012 թ.

Հ.Հ. Արագածոտնի մարզպետ
պարոն՝ Ս. Սահակյանին

Կից ներկայացվում է Օրգովի գյուղական համայնքի 2012թ-ի դեկտեմբերի 19-ի թիվ-4 ավագանու հերթական նիստի թիվ 35-Ա, 36-Ա, 37-Ա, 38-Ա և 39-Ա որոշումները:

ՕՐԳՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ելք
24 12 2012
Մուտք № 4/6130-12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ՕՐԳՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
19 Դեկտեմբերի 2012 թվականի N35-Ա

ՕՐԳՈՎԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013-2016ԹԹ-Ի ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ:

/ Զեկուցող՝ Ա. Մանուկյան/

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան *համայնքի ավագանին որոշում է՝*

1.Հաստատել Օրգովի գյուղական համայնքի 2013-2016թթ սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրով նախատեսված ծրագրերը կից հավելվածի.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2013թ-ի հունվարի 1-ից:

Կողմ-5 Դեմ- չկա Ձեռնպահ-չկա

Համայնքի ավագանի՝

1. Հովսեփյան Ռուբեն
2. Քամալյան Հայկ
3. Գրիգորյան Լևիկ
4. Տոնոյան Նորիկ
5. Կարապետյան Սոս

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2012թ. Դեկտեմբերի 19.
Գ. Օրգով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ՕՐԳՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
19 Դեկտեմբերի 2012 թվականի N36-Ա

ՕՐԳՈՎԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ-Ի «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ » ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ:

/ Զեկուցող՝ Ա. Մանուկյան/

« Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետին համապատասխան *համայնքի ավագանին որոշում է* ՝

1.Սահմանել Օրգովի գյուղական համայնքի 2013թ-ի «Տեղական տուրքերի և վճարների»դրույքաչափերը կից հավելվածի.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2013թ-ի Հունվարի 1-ից:

կողմ-5 Դեմ- չկա Ձեռնպահ-չկա

Համայնքի ավագանի՝

1. Հովսեփյան Ռուբեն
2. Քամալյան Հայկ
3. Գրիգորյան Լևիկ
4. Տոնոյան Նորիկ
5. Կարապետյան Սոս

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2012թ. Դեկտեմբերի 19.
Գ. Օրգով

ՕՐԳՈՎԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓ / դրամով /
1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի , շինությունների / ներառյալ ոչ հիմնական / շինարարության /տեղա--դրման / թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝	
Հիմնական օբյեկտների համար ա/ Մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական / ամառանոցային / տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար	15.000
բ/ Սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար	
բա/ 201-500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	30.000
բբ/ 501-1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	50.000
բգ/ 1001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	70.000
Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝ գ/ մինչև 20 քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	3.000
դ/ 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	5.000
2. Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման , ուժեղացման վերականգնման արդիականացման, աշխատանքների / բացառությամբ Հ.Հ. օրենսդրությամբ սահմանված ՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի / համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝	
ա/ չի նախատեսվում կցակառույցների , վերնակառույցների , շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն	3.000
բ/ բացի օբյեկտի վերակառուցման , ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից , նախատեսվում է նաև կցակառույցների , վերակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի « ա » ենթակետով սահմանված դրույքաչափի , կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդված 1 –ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով .	
գ/ նախատեսվում է միայն կցակառույցների , վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարության կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդված1-ին կետով սահմանված նորմերը:	
3. համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների ,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլատվության համար տեղական տուրքը սահմանվում է ՝	5.000
4. համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝	
1/ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝	1.500
2/ ծխախոտի առտադրանքի վաճառքի թույտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	1.500

5. համայնքի տարածքում	
ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար.	350.0
բ/ հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեղնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է	150.000
6. համայնքի տարածքում՝ առևտրի , հանրային սննդի , զվարճանքի,շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները , բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար ՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է ՝	
ա/առևտրի օբյեկտների համար ՝՝	25.000
բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝	50.000
գ/ բաղնիքների /սաունաների / համար	200.000
դ/ խաղատների կազմակերպման համար	500.000
ե/ շահումով խաղերի կազմակերպման համար	250.000
զ/ վիճակախաղերի կազմակերպման համար՝	100.000
7. համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառ.մետրի տեղական տուրքը սահմանվում է	
ա/ ալկահոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար	1.000
բ/ թունդ ալկոհոլային / սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար	2.500
գ/ այլ արտաքին գովազդի համար	500.0
դ/ դատարկ գովազդային վահանակների համար	700.0
8.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է	1.000
9. համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է	1.000

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	Դրույքաչափ / դրամ /
Օրգովի գյուղական համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ տեսակները	
ա/համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար .	1.000
բ/ տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.	1.000
գ/ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցություններ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար :	1.000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ՕՐԳՈՎԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
19 Դեկտեմբերի 2012 թվականի N37-Ա

ՕՐԳՈՎԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2013Թ-Ի ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/Ձեկ. Ա. Մանուկյան /

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 27- րդ հոդվածի 1-կետի և 16-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջներով *համայնքի ավագանին որոշում է՝*

1. Համայնքի ղեկավարի 2013Թ- ի աշխատավարձի դրույքաչափը սահմանել 170.0հազ դրամ, համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2013թ-ի Հունվարի 1-ից:

կողմ-5 Դեմ- չկա Ձեռնպահ-չկա

Համայնքի ավագանի՝

1. Հովսեփյան Ռուբեն
2. Քամալյան Հայկ
3. Գրիգորյան Լևիկ
4. Տոնոյան Նորիկ
5. Կարապետյան Սոս

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2012թ. Դեկտեմբերի 19.
Գ. Օրգով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ՕՐԳՈՎԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
19. Դեկտեմբերի 2012 թվականի N38-Ա

ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ՕՐԳՈՎԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ:

/Ձեկ. Ա. Մանուկյան /

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16- րդ հոդվածի 26-կետի պահանջներով *համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հաստատել 2013Թ-ի Օրգովի գյուղապետարան աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափերը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2013թ-ի Հունվարի 1-ից:

Կողմ-5 Դեմ- չկա Ձեռնպահ-չկա

Համայնքի ավագանի՝

1. Հովսեփյան Ռուբեն
2. Քամալյան Հայկ
3. Գրիգորյան Լևիկ
4. Տոնոյան Նորիկ
5. Կարապետյան Սոս

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2012թ. Դեկտեմբերի 19.
Գ. Օրգով

Հավելված
Օրգովի գյուղական համայնքի ավագանու
2012թ-ի Դեկտեմբերի 19 N 38- Ա

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՕՐԳՈՎԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 6 :
2. Կառուցվածքը, հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափերը:

Հ/Հ	Պաշտոնը	Ծածկագիրը	2013	
			միավորը	դրույքաչափ դրամ.
1.	Համայնքի ղեկավար		1	170000
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
2.	Աշխ. քարտուղար	1.2-1	1	135000
3.	Առաջ. մասնագետ	3.1-1	1	115000
4.	Առաջ. մասնագետ	3.1-2	1	115000
5.	Առաջ. մասնագետ	3.1-3	1	115000
	Ընդամենը		5	650000

ԳՐԱԴԱՐԱՆ

1.	Գրադարանավար	---	1	66000
	Ընդամենը	--	6	716000

Օրգով համայնքի ղեկավար Ա. Մանուկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ ՕՐԳՈՎԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ
19 Դեկտեմբերի 2012 թվականի N39-Ա

ՕՐԳՈՎԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ-Ի ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ:

/Ձեկ. Ա. Մանուկյան /

Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով 2013թ-ի բյուջեի առկա ֆինանսական միջոցները համամասնորեն բաշխելու, ինչպես նաև ծախսային մասը արդյունավետ կազմակերպելու նպատակով՝ առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 16/3 և «Բյուջետային համակարգի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 32/5հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով օրգովի գյուղական համայնքի 2013-2016թթ սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագիրը *համայնքի ավագանին որոշում է՝*

- Հաստատել Օրգովի գյուղական համայնքի 2013թ-ի տարեկան բյուջեի եկամտային մասը՝ համաձայն կից ներկայացված N 1հատվածի.
- Հաստատել Օրգովի գյուղական համայնքի 2013թ-ի տարեկան բյուջեի ծախսային մասը՝ համաձայն կից ներկայացված հատվածների

ա/ Ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման /N2 հատված/

բ/ Ըստ բյուջետային ծախսերի տնտեսական դասակարգման /N3 հատված/

գ/ Ըստ բյուջետային ծախսերի գործառնական տնտեսագիտական դասակարգման /N6 հատված/

	Վարչական բյուջե	Ֆոնդային բյուջե	ընդամենը
Եկամտային մաս	13126,0	1500,0	14626,0
Ծախսային մաս	13126,0	------	13126,0
Դեֆիցիտ	---------	8625,0	8625,0
Պահուստային ֆոնդ	1200,0	-------	---------

Կողմ-5 Դեմ- չկա Ձեռնպահ-չկա

Համայնքի ավագանի՝

1. Հովսեփյան Ռուբեն
2. Քամալյան Հայկ
3. Գրիգորյան Լևիկ
4. Տոնոյան Նորիկ
5. Կարապետյան Սոս

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2012թ. Դեկտեմբերի 19.
Գ. Օրգով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶ

ՕՐԳՈՎԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013-2016ԹԹ ՍՈՑԻԱԼ- ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԿԱԶՄԵՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012Թ-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի
N-35Ա ՈՐՈՇՄԱՄԲ

ՕՐԳՈՎ 2013Թ.

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՕՐԳՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ 213-2016ԹԹ

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

1.Համայնքի իրավիճակի գնահատում

Պատմական ակնարկ, աշխարագրական դիրք

Օրգով գյուղը գտնվում է ՀՀ արագածոտն մարզի Աշտարակի տարածաշրջանում, աշտարակից 18կմ հեռավորության վրա, քաղաքից հյուսիս-արևմուտք, Արագածի հարավային թեքությունների վրա;Գյուղի միջին բարձրությունը ծովի մակերևույթից 1650մետր է:

<Օրգով> անվանումը կապված է <Օրդ գովեմ> կամ <Գովական բնակավայր>արտահայտությունների հետ:Դա պայմանավորված է գյուղի դիրքով, գեղեցիկ բնությամբ զով ամառով և համեմատաբար մեղմ,տաք, առանց քամիների ձմեռներով:Համայնքը հայաստանի հնագույն բնակավայրերից մեկն է դրա վկայությունն է համայնքի վարչական տարածքում գտնվող կիկլոպյան բնակավայրի մնացորդները, որը թվագրում է մ.թ.ա.2000-ական թվականներիրն:Գյուղի շրջակայքում պահպանվել են բազմաթիվ հին խաչքարերի և քրիստոնեական պաշտամունքի հուշարձաններ:Օրգովից հյուսիս գտնվում են նշանավոր Ամբերդ բերդի ավերակները և եկեղեցին:

Գյուղի արևելյան սահմանի երկարությամբ ձգվում է Ամբերդ գետը, որի դիրքը և բնությունը շատ հարմար են հանգստի գոտիներ կազմակերպելու համար:

Սակայն գյուղի նոր պատմությունը սկսվում է 1928թ-ից, երբ Թուրքմենչայի պայմանագրով Արևմտյան Հայաստանից և Պարսկաստանից՝ Խոյից,Վանից,Սասունից,Ալշավազից ու Մուշից հայ ընտանիքները տեղափոխվեցին և բնակություն հաստատեցին Օրգովում:

Գյուղում տարեկան միջին ջերմաստիճանը հուլիսին +35 աստիճան է ,հունվարին -10-ից -15աստիճան: Տեղումների քանակը առատ չէ, այն կազմում է տարեկան 300-ից -800 մմ:Ձյունածածկույթի տևողությունը130օր է:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2012Թ-ի հունվարի 1-ի դրությամբ համայնքում բնակվում են 558 բնակիչ:Ընտանիքների թիվը 244-ն է:Բնակչության սեռատարիքային կազմն այսպիսին է:

ՀՀ	Բնակչության կազմը	Մարդ
1	Բնակչության թիվը, որից	558
	Տղամարդիկ	267
	Կանայք	291
2	Աշխատունակներ, որից	362
	Տղամարդիկ	162
	Կանայք	200
3	Թոշակառուներ և հաշվանդամներ	104
4	0-7 տարեկան երեխաներ	42
5	Դպրոցներ	40
6	Ընտրողներ	399
7	Ժամանակավոր բացակայողներ	12

Համայնքի բնակիչներից միայնակ ծերեր են 2-ը:միակողմանի ծնողազուրկ երեխաների թիվը 2-ն է:Գյուղը տրվել է Արցախյան պատերազմի կամավորներ:Երկու մարդ Հայրենական Մեծ պատերազմի մասնակից է:

Համայնքում բավականին մեծ թիվ են կազմում արտագնա աշխատանքի մեկնողները:նրանք գյուղը թող-Նում են վաղ գարնանը և վերադառնում ձմռանը:Տնտեսություններում հիմնական աշխատանքն իրականացնում են կանայք և երեխաները:

Տեղական ինքնակառավարման մարմիններ

Համայնքում տեղական ինքնակառավարման մարմինները ձևավորվել են 1997 թ-ին: Դրանք իրականացնում են համայնքի կառավարումը, ղեկավարումն ու բնակչության սպասարկումը:
Համայնքապետարանի աշխատակազմը բաղկացած է 6 հոգուց:
Համայնքապետարանի կառուցվածքը հետևյալն է :



Տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատողները բոլորն էլ համայնքի անդամներն են:
Համայնքի ավագանու անդամների թիվը 5-ն է :

Կրթություն, մշակույթ,առողջապահություն

Համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց, որը կազմավորվել է 1970թ-ին: Այժմ այնտեղ սովորում է 40 աշակերտ:Ուսուցիչների թիվը 16-ն է :Կան երթևեկ մանկավարժներ:
Դպրոցը հիմնանորոգման կարիք ունի: Կա անհրաժեշտ գույքի և սարքավորումների պակաս: Չեն գործում լաբորատորիաները ; Դասարանները ջեռուցվում են էլ. էներգիայով , որը չի ապահովում անհրաժեշտ և կայուն ջերմություն:
Համայնքում մշակութային օջախներ չկան : Գրադարանը տեղավորված է դպրոցի շենքում :
Չկա նաև բուժկետ: Բնակիչների առաջնային բուժ սպասարկումը իրականացնում է մեկ բուժքույր:Բուժկետը սարքավորումներ չունի : Համայնքի բնակիչները հիմնական բուժումը ստանում են Աշտարակի և Երևանի հիվանդանոցներում :
Դպրոցին կից կա պարզ տիպի խաղահրապարակ ;

Գյուղատնտեսություն

Համայնքն ունի 1115 .7հա. տարածություն, որից գյուղատնտեսական նշանակության՝ 713.7 հա: Հողատարածքների կազմն այսպիսին է :

-- Վարելահողեր ---- 21.4 հա.
-- Արոտավայրեր ---- 429.7 հա.
--- խոտհարքներ ---- 26.5 հա.
--- բնակ. հողեր ---- 156.8 հա.
--- անօգտագործելի է ---- 185.7 հա

Համայնքում հողատարածությունները փաստորեն ոռոգովի չեն և դրանցից շատ քիչ բերք է ստացվում :
Համայնքում սեփականաշնորհվել է 41.6 հա. հող : Մեկ հողաբաժնի չափը կազմում է 0.30 հա: Այս ցուցանիշը զգալիորեն պակաս է մարզի մյուս համայնքների համանման ցուցանիշից:
Համայնքում հողագործությունից ստացված եկամուտները բարձր չեն: Դրանք անհրաժեշտ պարարտացում չեն ստանում , չի կիրառվում ցանքաշրջանառություն, հողերը ոռոգովի չեն, քիչ է գյուղատնտեսական տեխնիկան:
Համայնքում պահվում են 415 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ,որոնցից կովեր են 188:Տնտեսություններում կան 330 գլուխ մանր եղջերավոր կենդանիներ, 7 գլուխ խոզ,1334թև թռչուններ և 239 մեղվաընտանիքներ:

Սերմնաբուծության, ցանկաշրջանառության և տոհմային անասնաբուծության բացակայության հետևանքով ցածր է մշակաբույսերի բերքատվությունը և կենդանիների մթերատվությունը: Աղքատ է կերի բազան

Այս ամենի պատճառով ճյուղից ստացած հասույթը չի բավարարում ընտանիքի ամբողջ պահանջները: Դրա հետևանքով համայնքում պարբերաբար թերակատարվում են հարկային եկամուտների ծրագրված ցուցանիշները:

Համայնքում չկա նաև անհրաժեշտ քանակությամբ գյուղատնտեսական տեխնիկա:Աշխատանքներ իրականացնելու համար տեխնիկան բերվում է այլ համայնքներից: Համայնքում կա ընդամենը 5 բեռնատար և 40 մարդատար ավտոմեքենա:

Բնակելի ֆոնդ

Համայնքի բնակարանային ֆոնդը կազմում է 147 բնակարան, որոնք զբաղեցնում են 21000 քառ. մ տարածություն: Տներից 8-ը կիսակառույց է , 7 ընտանիքներ բնակվում են վթարային տներում:Համայնքում բնակչներից ոչ բոլորն են ապահովված բնակարաններով, հատկապես նոր ստեղծված ընտանիքները, որոնք չունեն համապատասխան տնամերձ հողամասեր բնակարան կառուցելու համար: Ներկայումս 24 ընտանիք բնակարանի կարիք ունի:

Տրանսպորտ և կապ

Համայնքում հիմնականում գործում է բջջային կապը: Սովորական հեռախոսներից օգտվում է ընդամենը 2 ընտանիք:

Ավտոբուսային կապ կա ինչպես Աշտարակ քաղաքի, այնպես էլ Երևանի հետ:Սակայն ավտոբուսը ուղևորում է օրական երկու երթ, որը չի բավարարում բնակիչների պահանջները:

Գյուղի հարող մարզային նշանակությամբ ավտոճանապարհների վիճակը հիմնականում բավարար է: Սակայն գյուղամիջյան ճանապարհների մի մասում ասֆալտը քանդվել է, իսկ մի մասում ընդհանրապես ասֆալտապատ փողոցներ չկան:

Ենթակառուցվածքներ

Համայնքի խմելու ջրագծի երկարությունը 6.8 կմ.է ; Այն ենթակա է կապիտալ նորոգման:Կա նաև մեկ ջրաբաք 300խ.մ. ընդհանուր տարողությամբ:

Գյուղի ներտնտեսային ոռոգման ջրագիծը ունի 10.2կմ երկարություն:Դրանք հիմնականում սովորական առուներ են, որտեղ շատ են կորուստները:Ջրագծի հիմնական մասը ենթակա է կապիտալ վերանորոգման Այն հիմնականում ապահովում է տնամերձ հողամասերի ոռոգումը:

Համայնքը ունի նաև կապի բաժանմունք, որը չի գործում:Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 15կմ: Դրանցից ասֆալտապատ է 3.5կմ-ը:Ասֆալտի մեծ մասը քանդվել և շարքից դուրս է եկել :Վատ վիճակում է նաև գրունտային ճանապարհները:

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ֆիզիկական վիճակը

Համաձայն կառավարության 14.03.1997թ. 51 որոշման համայնքի սեփականությանն է պատկանում ինչպես շենքեր, շինություններ, այնպես էլ տրանսպորտ և մեխանիզմներ:

Համայնքի հաշվեկշռում հաշվառված են խմելու և ոռոգման ջրագծերը, ճանապարհները և գրասենյակային գույք և սարքավորում:Հիմնական միջոցների և գույքի վիճակը բավարար չէ, քանի որ դրանք հին են . ամբողջապես մաշված , երկար ժամանակ չեն վերանորոգվել:

Ջրագծերը նույնպես հին են և քայքայված , այնտեղ շատ են կորուստները: Գյուղամիջյան ճանապարհները երկար տարիներ չեն նորոգվել և դրանցում երթևեկության պայմանները բավարար չեն:

Համայնքի հիմնական ուժեղ կողմերը

- Գյուղը ամառանոցային լավ հանգստի գոտի է :
- Տուրիզմի և ալպինիզմի զարգացման լավ հնարավորություններ.
- Բարձրորակ շինանյութի տուֆի առկայություն՝ համայնքի մոտակայքում:

- Հողերի լավ մեխանիկական կազմ
- Անասնաբուծության զարգացման լավ հնարավորություններ կան
- Էկոլոգիապես մաքուր, գեղեցիկ բնություն և շրջակա միջավայր
- Անասնաբուծությունը զարգացնելու հնարավորություններ
- Բուժիչ և ուտելի խոտերի առատություն
- Գյուղմթերքների վերամշակման արտադրության [illegible] հնարավորությունները
- Կոոպերացիայի մեծ հնարավորությունները

Համայնքի հիմնական թույլ կողմերը և վտանգները

- Խմելու ջրի թերի ապահովումը
- Սահմանափակ մշակելի հողատարածություններ
- Ոռոգման ջրի բացակայությունը
- Համայնքապետարանի ֆինանսական միջոցների պակասը
- Սոցիալապես անապահով ընտանիքների մեծ քանակը
- Մշակութային օբյեկտների բացակայությունը
- Ճանապարհների անմխիթար վիճակը
- Ցրտահարություններ, կարկուտ:
- Համայնքապետարանի ֆինանսական ոչ բավարար միջոցներ
- Բնակչության սոցիալ-տնտեսական ոչ բարվոք պայմաններ
- Բնակչության արտահոսք և գործազրկություն:
- Բնակարանի կարիքավորների մեծ թիվ:

2.Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները

Համայնքի զարգացման ռազմավարությունն է
Հետևողական աշխատանքի, գյուղի առավելություններն իրացնելու ներդրումներ նատարելու շնորհիվ հասնել բնակավայրի բարգավաճմանը և ապահովել մարդկանց բարեկեցությունը

Համայնքի հիմնական նպատակներն են (առաջիկա երեք տարիների համար)

1 Հիմնական վերանորոգման ենթարկել համայնքապետարանի շենքը աշխատողների համար ստեղծել նորմալ պայմաններ.
2 Հիմնանորոգել համայնքի խմելու ջրագիծը Համայնքում ապահովել [illegible] ջրամատակարարում. նվազեցնել ջրի կորուստները
3 Հիմնանորոգել համայնքի դպրոցը.
4 Գազաֆիկացնել բնակավայրը
5 Կարգի բերել ներհամայնքային ճանապարհները.
6 Ապահովել հարկային եկամուտների հավաքագրումը.
7 Բարձրացնել գյուղատնտեսության արդյունավետությունը.
8 Ապահովել գյուղատնտեսական մթերքների իրացումը.
9 Բարելավել բնակչության բուժսպասարկումը և ակտիվ հանգիստը

ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՁՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՁԱԴՐՈՒՄ և ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵԱԿԵՐՊՈՒՄ.

Ծրագիր 1. Վերանորոգել համայնքապետարանի շենքը աշխատողների համար ստեղծել նորմալ պայմաններ.

Խնդիրներ

.Կազմել համայնքապետարանի շենքի վերանորոգման նախահաշվա- նախագծային փաստաթղթեր:
ժամկետը – մինչև 2013թ. փետրվար
Պատասխանատու – համայնքապետ

. Համայնքի բյուջեում շենքի վերանորոգման համար հատկացնել անհրաժեշտ գումարները:
ժամկետը – մինչև 2013թ. փետրվար
Պատասխանատու – ավագանի, առաջատար մասնագետ

. Պայմանագիր կնքել շինանյութ մատակարարող կազմակերպությունների հետ .
ժամկետը - մինչև 2013թ. մարտ
Պատասխանատու- առաջատար մասնագետ.

. Սկսել շենքի վերանորոգումը :
ժամկետը – մինչև 2013թ. ապրիլ
Պատասխանատու- համայնքապետ.

. Ավարտել շենքի վերանորոգումը:
ժամկետը – մինչև 2013թ.հոկտեմբերը
Պատասխանատու – համայնքապետ

. Ջեռք բերել նոր գույք և սարքավորումներ,կահավորել համայնքապետարանը:
ժամկետը – մինչև 2014թ. մարտ
Պատասխանատու – համայնքապետ, առաջատար մասնագետ.

.Ներկայացնել կատարված աշխատանքների մասին մանրամասն հաշվետվություն.
ժամկետը –մինչև 2014թ. դեկտեմբեր
Պատասխանատու- առաջատար մասնագետ

Ծրագիր 2. Համայնքի գազաֆիկացում :

Խնդիրներ

. Կազմել համայնքի գազաֆիկացման նախահաշվա - նախագծային փաստաթղթեր և ներկայացնել Հ.Ս.Ն.Հ:
ժամկետը կազմված է
Պատասխանատու- համայնքապետ

.Համայնքի կողմից ապահովել շինմոնտաժային աշխատանքներ նախագծային արժեքի 10 տոկոսի չափով ներդրում:
ժամկետը – մինչև 2013թ. ապրիլ
Պատասխանատու – համայնքապետ, առաջատար մասնագետ.

.Շինարարությունը Մ.Ճ.գազատարի սկսել 2013 հունիսին նախահաշվային արժեքը 10.273.9 հազ.դրամ:
ժամկետը մինչև 2013 դեկտեմբեր
Պատասխանատու համայնքապետ.

Ծրագիր 3. Հիմնանորոգել համայնքի խմելու ջրագիծը: Համայնքում ապահովել շուրջօրյա ջրամատակարարում , նվազեցնել ջրի կորուստները :

. Խնդիրներ

. Կազմել խմելու ջրագծի տեխնիկական վիճակի մասնագիտական գնահատականը

ժամկետը – մինչև 2013թ. փետրվար
Պատասխանատու – ավագանի, առաջատար մասնագետ

. Համայնքի բյուջեյում ջրագծի վերանորոգման համար հատկացնել գումարներ;

ժամկետը – մինչև 2013թ. մարտ
Պատասխանատու – ավագանի, առաջատար մասնագետ

. Կազմել աշխատանքների նախահաշիվ և ներկայացնել Հ.Ս.Ն.Հ;

ժամկետը – մինչև 2013թ. մարտ
Պատասխանատու – համայնքապետ, առաջատար մասնագետ

.Համայնքի կողմից ապահովել շինմոնտաժային աշխատանքների նախագծային արժեքի 10 տոկոսի չափով ներդրում;

ժամկետը – մինչև 2013թ. ապրիլ
Պատասխանատու – համայնքապետ, առաջատար մասնագետ

. Շինարարությունը սկսել 2013թ.հունիսին և ավարտել 2014թ. հոկտեմբերին

ժամկետը – մինչև 2014թ.հոկտեմբերը
Պատասխանատու – համայնքապետ

Ծրագիր 4.Սոցիալական ծրգրերի իրականացում / անապահով ընտանիքներին օգնություն/

Խնդիրներ

. Ուսումնասիրել և ճշտել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների ցուցակը ;

Պատասխանատու համայնքապետ
ժամկետը մինչև 2013թ. մարտ

. Համայնքի բյուջեում նախատեսել գումարներ համայնքի անապահով ընտանիքներին օգնություն հատկացնելու համար

Պատասխանատու – համայնքապետ, առաջատար մասնագետ,ավագանի
ժամկետը մինչև տարեվերջ

Ծրագիր 5. Ոռոգման ցանցի նորոգում

Խնդիրներ

. Կազմել համայնքի ջրարբիացման համակարգի վերականգնման տեխնիկական վիճակի մասնագիտական վիճակի մասնագիտական գնահատականը ; Աշխատանքները իրականացնել սեփական ուժերով ; Կազմել առուների նորոգման նախագիծ նախահաշիվ:

Պատասխանատու - գյուղապետարան
-ժամկետը ամեն տարի մինչև մայիս

.Կատարել աշխատանքի բաժանում բնակիչների միջև ըստ թաղամասերի , որոշել յուրաքանչյուրի ներդրման ձևն ու չափը:

Պատասխանատու – համայնքապետ
ժամկետը ամեն տարի մինչև մայիս

. Աշխատանքները սկսել ամեն տարի ապրիլին և ավարտել նույն ամսում ;

Պատասխանատու – համայնքապետ
ժամկետը ամեն տարի գարնանը

Ծրագիր 6. Շրջակա միջավայրի պաշտպանություն:

Խնդիրներ

. Կազմել աղբահանության աշխատանքների իրականացման գրաֆիկ նախահաշիվներ ներկայացնել համայնքի ներկայացուցիչներին և ավագանուն; Աշխատանքները իրականացնել սեփական ուժերով.

Պատասխանատու համայնքապետ
առաջատար մասնագետ
ժամկետը ամեն տարի մարտ

. Կառուցել պարզ տիպի աղբանոց և ամիսը մեկ անգամ կազմակերպել աղբահանություն համայնքի ուժերով

Պատասխանատու – համայնքապետ
ժամկետը ամեն տարի

. Կնքել պայմանագիր բեռնատար ավտոմեքենա ունեցող անհատ անձանց հետ աշխատանքի ծավալի և վարձատրության կարգի մասին;

Պատասխանատու համայնքապետ
առաջատար մասնագետ
ժամկետը ամեն տարի մարտ

Ծրագիր 7.վերանորոգել ներհամայնքային ճանապարհները:

Խնդիրներ

. Կազմել ճանապարհների նորոգման աշխատանքների իրականացման ծրագիր:

Աշխատանքները իրականացնել սեփական ուժերով ; Կազմել ճանապարհների նորոգման նախագիծ – նախահաշիվ;

Պատասխանատու – համայնքապետ
ժամկետը ամեն տարի մինչև մարտ

. Կատարել աշխատանքի բաժանում բնակիչների միջև ըստ թաղամասերի, որոշել յուրաքանչյուրի ներդրման ձևն ու չափը:

Պատասխանատու – առաջատար մասնագետ
ժամկետը ամեն տարի մինչև մարտ

.Ճշտել անհրաժեշտ ներդրման չափը և պակասող միջոցները հայթայթել բարեգործների միջոցով;

Պատասխանատու – համայնքապետ
ժամկետը ամեն տարի մինչև մարտ

. Աշխատանքները սկսել ամեն տարի ապրիլին և ավարտել մայիս ամսում:

Պատասխանատու – համայնքապետ
ժամկետը ամեն տարի գարնանը

Ծրագիր 8. Բարձրացնել գյուղատնտեսության շահույթաբերությունը:

Խնդիրներ.

Ուսումնասիրել սերմերի,պարարտանյութերի նկատմամբ համայնքի պահանջը:

Պատասխանատու – համայնքապետ
ժամկետը ամեն տարի փետրվարին

. Յուրաքանչյուր տարվա փետրվարին , մարզպետարան ներկայացնել սերմերի և պարարտանյութի պահանջարկի հայտ.

Պատասխանատու – համայնքապետ
ժամկետը ամեն տարի մինչև ապրիլ

.Կապեր հաստատել հանրապետությունում պարարտանյութ և սերմեր ներկրող և արտադրող կազմակերպությունների և անհատների հետ,տալ նախնական պատվերներ.

Պատասխանատու – համայնքապետ
ժամկետը ամեն տարի մինչև ապրիլ

.Պայմանավորվել գյուղ տեխնիկա ունեցող անձանց հետ աշխատանքի ծավալի, ժամկետների վարձատրության կարգի մասին.

Պատասխանատու – համայնքապետ
ժամկետը ամեն տարի մինչև ապրիլ

.Ապահովել պարարտանյութի և սերմացուի ներդրումն ու բաժանումը բնակչությանը.

Պատասխանատու – համայնքապետ
ժամկետը ամեն տարի մինչև ապրիլ

.Պայմանագիր կնքել մթերող կազմակերպությունների և անհատների հետ՝ կենտրոնացված կարգով գյուղատնտեսական արտադրանքի մթերումներ իրականացնելու համար: Հետևել պայմանագրերի կատարման ընթացքին

Պատասխանատու – համայնքապետ
ժամկետը տարվա ընթացքում

Ծրագիր 9. Համայնքի լուսավորություն

Խնդիր.

. Կազմել համայնքի լուսավորության նախահաշվա-նախագծային փաստաթղթեր և ներկայացնել Հ.ս.Ն.Հ.

Պատասխանատու – համայնքապետ
ժամկետը մինչև 2013 մարտ

. Համայնքի կողմից ապահովել շինմոնտաժային աշխատանքների նախագծային արժեքի 10 %- ի չափով ներդրում:

Պատասխանատու – համայնքապետ
ժամկետը մինչև 2013թ մարտ
առաջատար մասնագետ

.Սկսել լուսավորության աշխատանքները 2013թ. Հունիսին նախահաշվային արժեքը 2000.0 դրամ

Պատասխանատու – համայնքապետ
ժամկետը մինչև 2013 հոկտեմբեր

Ծրագիր 10. Ապահովել հարկերի, տուրքերի վարձավճարների և մյուս եկամուտների հավաքագրման ծրագրի կատարումը

Խնդիրներ

.Յուրաքանչյուր տարի փետրվար ամսին հաստատել հարկերի, տուրքերի, վարձավճարների հավաքագրման պլան գրաֆիկ:

Պատասխանատու – առաջատար մասնագետ
ժամկետը ամեն տարի մարտ

.Կազմել նախորդ տարիների պարտքերի մարման ժամանակացույցը՝ ըստ պարտքերի ;

Պատասխանատու – առաջատար մասնագետ
ժամկետը ամեն տարի մարտ

.ժամանակացույցերը և գրաֆիկները ներկայացնել հարկատուներին և նրանց հետ տանել բացատրական աշխատանքներ:

Պատասխանատու—առաջատար մասնագետ

ժամկետը ամեն տարի

. Յուրաքանչյուր ամիս հաշվետվություն ներկայացնել սեփական եկամուտների կատարման ընթացքի մասին
;

Պատասխանատու—առաջատար մասնագետ
ժամկետը ամեն տարի մարտ

.Եռամսյակը մեկ անգամ կազմակերպել հարկատուների հավաք , նրանց ներկայացնել հարկերի հավաքման հավաքված գումարների ծախսի մասին տեղեկատվություններ;
ներկայացնել ծրագրերը և դրանց կատարման ընթացքը: Հաշվետվություն տալ պարտքերի մարման և հարկերի հավաքման ժամանակացույցի և գրաֆիկի կատարման ընթացքի մասին:

Պատասխանատու – համայնքապետ
առաջատար մասնագետ,
ժամկետը ամեն տարի

ՕՐԳՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2013-2016ԹԹ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐՈՎ

ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԵՆԹԱԾՐԱԳՐԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ:

	Ծախսը ՎՆ1000դրամ				Ընդ. Ծախս. 1000դր	Արտաքին աղբյուրներ				Համայնքի միջոցներ							
										Համայնքի բյուջեից				այլ աղբյուրներից			
	2013	2014	2015	2016		2013	2014	2015	2016	2013	2014	2015	2016	2013	2014	2015	2016
Վերանորոգել համայնքապե-Տարանի շենքը,ձեռք բերել նորգույք և սարքավորումներ	4000.0	1000.0	00	00	5000.0	00	00	00	00	4000.0	1000.0	00	00	00	00	00	00
Համայնքի գազաֆիկացում	10273.9	15470.7	15470.7	15470.7	56686.0	9273.9	13970.7	13970.7	13970.7	1000.0	1500.0	1500.0	1500.0	00	00	00	00
Հիմնանորոգել խմելու ջրագիծը	10000.0	5000.0	1000.0	5000.0	16500.0	00	00	00	00	1000.0	500.0	100.0	50.0	9000.0	4500.0	900.0	450.0
Սոցիալական ծրագրերի իրա-Կանացում /անապահով ընտ. Օգնություն/	700.0	750.0	800.0	850.0	3100.0	00	00	00	00	700.0	750.0	800.0	850.0	00	00	00	00
Ոռոգման ցանցի նորոգում	50,0	100.0	100.0	100.0	350.0	00	00	00	00	00	00	00	00	50.0	100.0	100.0	100.0
Շրջակա միջավայրի պաշտպանություն	200.0	250.0	250.0	250.0	950.0	00	00	00	00	200.0	250.0	250.0	250.0	00	00	00	00
Վերանորոգել ներհամայնքային և դաշտային ճանապարհներ	3500.0	50.0	100.0	200.0	3850.0	00	00	00	00	3450.0	00	00	00	50.0	50.0	100.0	200.0
Գյուղատնտեսության աջակցություն	300.0	700.0	1000.0	1200.0	3200.0	100.0	300.0	500.0	00	00	00	00	00	200.0	400.0	500.0	1200.0
Համայնքի լուսավորություն	2000.0	1000.0	500.0	00	3500.0	00	00	00	00	900.0	200.0	100.0	00	1100.0	800.0	400.0	00

Ծրագրի պատասխանատու համայնքի ղեկավար՝ Ա. Մանուկյան

ՀՀ Արագածոտն մարզի Օրգով համայնքի 2013-2016թթ.քառամյա ծրագրով նախատեսված մուտքեր

ՀՀ	Եկամուտներ	2012թ. Պլան	2012թ.փաս.	2013թ.կանխ.	2014թ.կանխ.	2015թ.կանխ.	2016թ.կանխ.
1	Հողի հարկ	170.9	170.9	280.0	300.0	300.0	300.0
2	Գույքահարկ	1215.2	1115.2	2200.0	2500.0	2500.0	3000.0
3	Տեղական տուրքեր	100.0	72.0	100.0	100.0	100.0	100.0
4	Հողի վարձավճար	3900.0	2025.0	3900.0	3900.0	4000.0	4300.0
5	Դոտացիա	612.3	6122.3	6646.0	6700.0	6750.0	6750.0
6	Կապիտալ գործունեություն	2625.6	1425.0	1200.0	1500.0	1600.0	2000.0
7	Հողի օտարում	00	7521.3	300.0	00	00	00
8	Ընդամենը	14134.0	18451.7	14626.0	15000.0	15250.0	16450.0